ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 06.02.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ԱՄ-2019/07

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձն՝ ի դեմս Միեր Անանյանի

Մասնակցությամբ՝ «ԳՐԻՖ» ԱՀԻԳ ՍՊԸ-ի տնօրեն՝

Է. Սիմոնյան (պետական գրանցման վկայական թիվ 03Ա175860)

«ԳՐԻՖ» ԱՀԻԳ ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Գ. Լեգրյան (լիազորագիր, տրված՝ 24.01.2019թ.)

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի ներկայացուցիչներ՝

Ռ. Ալբերտյան (Լիազորագիր, տրված՝ 24.01.2019թ.)

Վ. Խաչատրյան (Լիազորագիր, տրված՝ 24.01.2019թ.)

Ա. Եփրեմյան (Լիազորագիր, տրված՝ 24.01.2019թ.)

Քննելով «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կարիքների համար անվտանգության և պահնորդային ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-18/57» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում

«Յունիպրոտեկտ Գարդինգ» ՍՊԸ-ի կողմից 21.01.2019թ. ներկայացված և 21.01.2019թ. վարույթ ընդունված բողոքը որպես ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնված բողոքարկման ընթացակարգ, ինչպես նաև «ԳՐԻՖ» ԱՀԻԳ ՍՊԸ-ի կողմից 22.01.2019թ. ներկայացված և 22.01.2019թ. վարույթ ընդունված համանման բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲՔԱ-ԱՄ-2019/07 բողոք), պարզեցի հետևյալը.

1. «Յունիպրոտեկտ Գարդինգ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Յունիպրոտեկտ Գարդինգ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) 21.01.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից անվտանգության և պահնորդային ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-18/57» ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին, ի թիվս այլ ընկերությունների, հայտ է ներկայացրել նաև «Յունիպրոտեկտ Գարդինգ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.12.2018թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ «Յունիպրոտեկտ Գարդինգ» ՍՊԸ-ի հայտում նշված ՀՎՀՀ-ով ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային համակարգում գրանցված է «Յունիպրոտեկտ Գարդինգ» ՍՊԸ-ն, մասնակցի ներկայացրած լիցենզիան (N07) նույնպես տրված է «Յունիպրոտեկտ Գարդինգ» ՍՊԸ-ին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված թերությունները անհամատեղելի են ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի պահանջների հետ և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով՝ որոշվել է «Յունիպրոտեկտ Գարդինգ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ,

կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

Համաձայն Ընթացակարգի Հրավերի 5.2 կետի՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա ներկայացվող գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն կետում նշված հարկի գումարի հաշվարկման:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով «Յունիպրոտեկտ Գարդինգ» ՍՊԸ-ն Հավելված 4՝ գնային առաջարկով, հայտնել է, որ ուսումնասիրել է «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-18/57»

ծածկագրով գնանշման հարցման հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը և առաջարկում է պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գնով.

Չափա-բաժինների համարները	Ծառայության անվանումը	Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	2	3	4	5=3+4
1	Անվտանգության և պահնորդական ծառայություն /վարչական շենք/	16 951 000 /տասնվեց միլիոն ինը հարյուր հիսունմեկ հազար/		16 951 000 /տասնվեց միլիոն ինը հարյուր հիսունմեկ հազար/
2	Անվտանգության և պահնորդական ծառայություն /ենթակայաններ/	25 121 400 /քսանհինգ միլիոն մեկ հարյուր քսանմեկ հազար չորս հարյուր/		25 121 400 /քսանհինգ միլիոն մեկ հարյուր քսանմեկ հազար չորս հարյուր/

«Յունիպրոտեկտ Գարդինգ» ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից անվտանգության և պահնորդային ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-18/57» ծածկագրով գնանշման հարցմանը, սակայն վերջինիս հայտը մերժվել է, քանի որ ներկայացված փաստաթղթերում թյուրիմացաբար «Յունիպրոտեկտ Գարդինգ» ՍՊԸ-ի փոխարեն նշվել է «Յունիպրոտեկտ Գարդինգ» ՍՊԸ:

Տվյալ պարագայում Բողոքաբերը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրություն է հրավիրել այն հանգամանքի վրա, որ «Յունիպրոտեկտ Գարդինգ» ՍՊԸ-ի Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած Հավելված N 4՝ գնային առաջարկը, համապատասխանում է Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետով, ինչպես նաև Ընթացակարգի Հրավերի 5.2 կետով սահմանված պահանջներին, մասնավորապես, Ընկերության կողմից գնային առաջարկը ներկայացվել է արժեքի (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) տեսքով:

Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ Հավելված N 4՝ գնային առաջարկից՝ հաշվարկից հետո, թղթի ստորին հատվածում թյուրիմացաբար «Յունիպրոտեկտ Գարդինգ» ՍՊԸ-ի փոխարեն նշվել է «Յունիպրոտեկտ Գարդինգ» ՍՊԸ («գ» տառը չի

նշվել), ապա Ընկերությունը հայտնել է, որ Ընկերության անվան մեջ վերջին «Գ» տառի բացակայությունը չէր կարող հիմք հանդիսանալ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի համար վերջինիս հայտը անբավարար գնահատելու համար, քանի որ ներկայացրած փաստաթղթերում, մասնավորապես, Հավելված N 1՝ գնանշմանը մասնակցելու դիմում, նշված է եղել Ընկերության ՀՎՀՀ-ն, իսկ այնուհետև ներկայացվել համապատասխան լիցենզիան, ինչը հնարավորություն է տվել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին համադրության մեջ գնահատել Ընկերության հայտը, այսինքն հիմք ընդուներ այն փաստը, որ տվյալ ՀՎՀՀ-ով ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային համակարգում գրանցված է «Յունիպրոտեկտ Գարդինգ» ՍՊԸ-ն:

Բացի այդ, մասնակցի ներկայացրած լիցենզիան (N07) նույնպես տրված է եղել «Յունիպրոտեկտ Գարդինգ» ՍՊԸ-ին: Սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը անտեսել է վերը նշված հանգամանքները և կառչելով այն փաստից, որ Ընկերության ներկայացրած փաստաթղթերում նշված անվան մեջ վերջին «Գ» տառը բացակայել է, մերժել է Ընկերության հայտը:

Ընկերությունը գտնում է, որ վերոհիշյալ փաստերը և գնահատող հանձնաժողովի գործողությունները հանգեցրել են Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի և Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտմանը, քանի որ, ինչպես պահանջում է գնումների մասին ՀՀ օրենսդրությունը՝ գնային առաջարկը ներկայացվել է Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի և Հրավերի պահանջներին համապատասխան, մասնավորապես մասնակիցը գնային առաջարկը ներկայացրել է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած ճիշտ հաշվարկի ձևով:

Ավելին, նման պայմաններում գնահատող հանձնաժողովի կողմից թույլտված անգործության հետևանքով Պատվիրատուն ստիպված կլինի կնքել պայմանագիր հաջորդաբար տեղ զբաղեցրած ավելի բարձր գին առաջարկած մասնակից հետ, ինչը էական վնաս կպատճառի բյուջեին և կհանդիսանա բյուջեի միջոցների անհիմն վատնում:

Ընկերությունը բողոքով խնդրել է դադարեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.12.2018թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2

արձանագրության 4-րդ կետով «Յունիպրոտեկտ Գարդինգ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

«Յունիպրոտեկտ Գարդինգ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 22.01.2019թ. միջնորդությամբ խնդրել է առանց քննության թողնել ԳԲՔԱ-ԱՄ-2019/07 բողոքը:

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 06.12.2018թ. N 600-Ն հրամանով հաստատված Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության կարգի 22-րդ կետի համաձայն՝ ԳԲՔԱ-ԱՄ-2019/07 քողոքը համարվել է որպես ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնված բողոքարկման ընթացակարգ:

Միևնույն ժամանակ «Յունիպրոտեկտ Գարդինգ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 31.01.2019թ. ներկայացրել է դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

21.01.2019թ. գնահատող հանձնաժողովը հրապարակել է արձանագրություն, ըստ որի՝ հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության 16.01.2019թ. թիվ 1/26-1381-19 գրությունը՝ որոշում է կայացրել հիմք ընդունելով լիազոր մարմնի գրությունը վերագնահատել անբավարար գնահատված մասնակիցների հայտերը, որի արդյունքում ի թիվս այլ մասնակիցների, «Յունիպրոտեկտ Գարդինգ» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է բավարար:

Ընկերությունը կրկին պնդել է 21.01.2019թ. բողոքով ներկայացված փաստերը, ինչպես նաև հայտնել, որ այս մասով ներկայացված «Գրիֆ» ԱՀԻԳ ՍՊԸ-ի կողմից 22.01.2018թ. ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԱՄ-2019/07 բողոքն ենթակա չէ բավարարման և այն պետք է մերժվի:

Ինչ վերաբերում է «Սեքյուրիթի Գրուպ» ՍՊԸ-ի հայտին, ապա Ընկերությունը հայտնել է, որ վերագնահատելու արդյունքում բավարար է գնահատվել նաև առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչված «Սեքյուրիթի Գրուպ» ՍՊԸ-ի հայտը, որը Ընկերության կարծիքով իրավաչափ չէ:

Ընկերությունը գտնում է, որ «Սեքյուրիթի Գրուպ» ՍՊԸ-ի հայտը ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ՝ «Սեքյուրիթի Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված

հայտը ստորագրված է եղել ոչ թե տնօրենի, այլ աշխատակցի կողմից, որին լիազորելու վերաբերյալ լիազորագիր կցված չի եղել:

Ընկերությունը գտնում է, որ հենց այս հիմքով էլ գնահատող հանձնաժողովը մերժել էր «Սեքյուրիթի Գրուպ» ՍՊԸ-ի հայտը՝ քանի որ գտնում է, որ եթե չկա լիազորագիր՝ չկա նաև հայտ, քանի որ «Սեքյուրիթի Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը տնօրենի փոխարեն կարող էր ստորագրել միայն լիազորված անձը՝ համապատասխան լիազորագրի հիման վրա:

«Յունիպրոտեկտ Գարդինգ» ՍՊԸ-ն գտնում է, որ այս մասով ներկայացված «Գրիֆ» ԱՀԻԳ ՍՊԸ-ի կողմից 22.01.2018թ. ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԱՄ-2019/07 բողոքն ենթակա է բավարարման:

«Յունիպրոտեկտ Գարդինգ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 24.01.2019թ. ժամը 10:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

2. <u>«Գրիֆ» ԱՀԻԳ ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«ԳՐԻՖ» ԱՀԻԳ ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 22.01.2019թ. համանման բողոքով հայտնել է հետևյալը.

«Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից անվտանգության և պահնորդային ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-18/57» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցել են թվով 6 ընկերություններ, այդ թվում՝ «ԳՐԻՖ» ԱՀԻԳ ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.12.2018թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ «Սեքյուրիթի Գրուպ», «Սայգա» պահնորդային և «Յունիպրոտեկտ Գարդինգ» ՍՊ ընկերությունների հայտերի հավելված 4-ում տեղ գտած սխալների և անճշտությունների պատճառով գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետի և Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները վերջիններիս հայտերը գնահատել է անվաբարար և մերժել:

Գնահատող հանձնաժողովի 21.01.2019թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության 16.01.2019թ. թիվ 1/26-1381-19 գրությունը (խորհրդատվական բնույթ կրող) որոշել է վերագնահատել վերոհիշյալ ընկերությունների հայտերը և դրանք ճանաչել բավարար:

Բողոքաբերը վկայակոչել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, Ընթացակարգի հրավերի 5.1, 5.2, 5.3, 7.2-րդ կետերը:

Բողոքաբերը գտնում է, որ «Սեքյուրիթի Գրուպ», «Սայգա» պահնորդային և «Յունիպրոտեկտ Գարդինգ» ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված գնային առաջարկները չեն համապատասխանել հրավերով սահմանված գնային առաջարկի պայմաններին և կազմման պահանջներին, իսկ Օրենքով, Կարգով և հրավերով վերջիններիս ներկայացրած գնային առաջարկների անհամապատասխանությունների և սխալների մասով գնահատման (բավարար գնահատման) առանձնահատկություններ սահմանված չեն:

ՀՀ ֆինանսների նախարարության 16.01.2019թ. թիվ 1/26-1381-19 խորհրդատվական բնույթ կրող գրությամբ ներկայացված այն տեսակետը, որ էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով իր անվանումով բացված կայքէջով մասնակցի հայտի ներկայացումը (որտեղ նշված է նաև ՀՎՀՀ-ն) հիմք է, որպեսզի մասնակցի հայտի գնային առաջարկում սխալ լրացված կամ միգուցե չլրացված անվանման պատճառով մասնակցի հայտը չմերժվի, չունի որևէ օրենսդրական կամ նորմատիվ հիմնավորում և կարգավորում, այն չի հիմնավորում և ապահովում գնային առաջարկ փաստաթղթի իրավական համապատասխանությունը օրենսդրությամբ սահմանված նորմերի պահանջներին:

Նմանապես՝ գնային առաջարկի էլեկտրոնային համակարգի միջոցով ներկայացված լինելու հանգամանքը չի կարող գերակայել Օրենքով, Կարգով և հրավերով հրավերի փաստաթղթերին ներկայացված պահանջների պահպանման նկատմամբ:

Այն պնդումները, որ սխալները և անհամապատասխանությունները գնային առաջարկում տեղ են գտել թյուրիմացաբար կամ այլ պատճառներով (նորմատիվ կարգավորումներ չունեցող), չեն կարող ներկայացված փաստաթղթերին ապահովել

օրինականություն և Օրենքի, Կարգի և հրավերի նորմերին համապատասխանությունը: Նույն տրամաբանությամբ կարելի է ճշտել և սրբագրել ցանկացած թյուրիմացաբար կամ անփությամբ կամ էլ այլևայլ դիտավորությամբ սխալ լրացված փաստաթուղթը:

«ԳՐԻՖ» ԱՀԻԳ ՍՊԸ-ն բողոքով խնդրել է վերացնել «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-18/57» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.01.2019թ. հայտերի վերագնահատման նիստի թիվ 3 արձանագրության 1-ին մասով կայացված «Սեքյուրիթի Գրուպ», «Սայգա» պահնորդային և «Յունիպրոտեկտ Գարդինգ» ՍՊԸ-ների հայտերի վերագնահատման և դրանց բավարար ճանաչման մասին որոշումը:

«ԳՐԻՖ» ԱՀԻԳ ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 24.01.2019թ. ժամը 10:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են համանման բողոքով ներկայացված դիրքորոշումը:

3. «Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

«Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-18/57» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 24.01.2019թ. ժամը 10:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր հայտնել են, որ ՀՀ ֆինանսների նախարարության՝ որպես ոլորտի լիազոր մարմնի կողմից տրված պարզաբանումը ուղղորդող է եղել գնահատող հանձնաժողովի, բայց ոչ պարտադիր, քանի որ գնահատող հանձնաժողովն ինքն է կայացրել ընկերությունների հայտերը բավարար գնահատելու մասին որոշում:

4. ԳԲՔԱ-ԱՄ-2019/07 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ԱՄ-2019/07 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից «Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կարիքների համար հայտարարվել է «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-18/57» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ են ներկայացրել «Յունիպրոտեկտ Գարդինգ», «Սեքյուրիթի Գրուպ», «Սայգա» պահնորդային ՍՊ ընկերությունները:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.12.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետով կայացված որոշմամբ «Յունիպրոտեկտ Գարդինգ», «Սեքյուրիթի Գրուպ», «Սայգա» պահնորդային ՍՊ ընկերությունների հայտերը մերժվել են գնային առաջարկի՝ հրավերի պահանջներին անհամապատասխան լինելու հիմքով:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.01.2019թ. նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետի համաձայն, գնահատող հանձնաժողովը որոշել է, հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության 16.01.2019թ. թիվ 1/26-1381-19 գրությունը, Յունիպրոտեկտ Գարդինգ», «Սեքյուրիթի Գրուպ», «Սայգա» պահնորդային ՍՊ ընկերությունների՝ բացման նիստում անբավարար գնահատված հայտերը վերագնահատել և ճանաչել բավարար:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով «Յունիպրոտեկտ Գարդինգ» ՍՊԸ-ի կողմից 21.01.2019թ. ներկայացված բողոքը որպես ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնված բողոքարկման ընթացակարգ և կից փաստաթղթերը, «ԳՐԻՖ» ԱՀԻԳ ՍՊԸ-ի 22.01.2019թ. ներկայացրած համանման

բողոքը և կից փաստաթղթերը, «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-18/57» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է գնային առաջարկ:

Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

«Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից «Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կարիքների համար հայտարարվել է «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-18/57» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ են ներկայացրել «Յունիպրոտեկտ Գարդինգ», «Սեքյուրիթի Գրուպ», «Սայգա» պահնորդային ՍՊ ընկերությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.12.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետով կայացված որոշմամբ «Յունիպրոտեկտ Գարդինգ», «Սեքյուրիթի Գրուպ», «Սայգա» պահնորդային ՍՊ ընկերությունների հայտերը մերժվել են գնային առաջարկի՝ հրավերի պահանջներին անհամապատասխան լինելու հիմքով. մասնավորապես՝

«Յունիպրոտեկտ Գարդինգ» ՍՊԸ-ի հայտում նշված ՀՎՀՀ-ով արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային համակարգում գրանցված է «Յունիպրոտեկտ Գարդինգ» ՍՊԸ-ն, մասնակցի ներկայացրած լիցենզիան նույնպես տրված է «Յունիպրոտեկտ Գարդինգ» ՍՊԸ-ին:

«Սեքյուրիթի Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի հավելված թիվ 4՝ գնային առաջարկում ծառայության անվանումը լրացված չէ:

«Սայգա» պահնորդային ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի թիվ 4՝ գնային առաջարկում ծառայության անվանման փոխարեն գրված է գնումների միասնական անվանացանկերի կոդը:

Այսպես՝ «Յունիպրոտեկտ Գարդինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հավելված թիվ 4 գնային առաջարկի մեջ ընկերության անվանումը նշվել է «Յունիպրոտեկտ Գարդին» ՍՊԸ, այսինքն՝ չի նշվել վերջին «գ» տառը: Միևնույն ժամանակ, ընկերության կողմից ներկայացված «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-18/57» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմումի մեջ նշված ՀՎՀՀ-ով ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային համակարգում գրանցված է «Յունիպրոտեկտ Գարդինգ» ՍՊԸ-ն: Դրա հետ մեկտեղ ընկերության կողմից հայտով ներկայացվել է մասնավոր պահնորդական գործունեության իրականացման թիվ 07 լիցենզիան, որը տրված է «Յունիպրոտեկտ Գարդինգ» ՍՊԸ-ին:

Ուսումնասիրելով «Յունիպրոտեկտ Գարդինգ» ՍՊԸ-ի գնային առաջարկը, ինչպես նաև հայտով ներկայացված փաստաթղթերը, գտնում եմ, որ ընկերության անվանման մեկ տառի թերի նշված լինելը հանիդսանում է ձևական թերություն և չի կարող դիտվել որպես ընկերության հայտը մերժելու բավարար հիմք:

«Սեքյուրիթի Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի հավելված թիվ 4՝ գնային առաջարկում նշվել են չափաբաժինները, սակայն չեն լրացվել «Գնման առարկայի չափաբաժնի անվանումը» դաշտը, իսկ «Սայգա» պահնորդային ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի թիվ 4՝ գնային առաջարկում «Գնման առարկայի չափաբաժնի անվանումը» դաշտում լրացվել է գնումների միասնական անվանացանկերի կոդը, սակայն չի նշվել գնման առարկայի անվանումը:

Այս տեսանկյունից անհրաժեշտ է նշել, որ «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-18/57» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով նախատեսվել է երկու չափաբաժին.

հրավերով	գնումների պլանով	անվանումը

նախատեսված չափաբաժնի համարը	նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	
1	79711130/502	Անվտանգության և պահնորդական ծառայություն /վարչական շենք/
2	79711130/503	Անվտանգության և պահնորդական ծառայություն /ենթակայաններ/

Հրավերի թիվ 4 հավելվածով նախատեսվել է գնային առաջարկի հետևյալ օրինակելի ձևը.

Չափա-բաժինների համարները	Ծառայության անվանումը	Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5=3+4*
1	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N1>>			
2	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N2>>			
3	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N3>>			

Ուսումնասիրելով «Սեքյուրիթի Գրուպ» և «Սայգա» պահնորդային ՍՊ ընկերությունների գնային առաջարկները, գտնում եմ, որ չնայած այն հանգամանքին, որ վերջիններիս կողմից գնային առարկայի մեջ «Գնման առարկայի չափաբաժնի անվանումը» դաշտում չի նշվել չափաբաժնի անվանումը, այնուամենայնիվ հայտը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով ներկայացնելու պայմաններում (ըստ առանձին չափաբաժինների), ինչպես նաև չափաբաժինների համարները, իսկ մյուս դեպքում նաև գնման առարկայի՝ գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագրերի նշված լինելու հանգամանքը հաշվի առնելով, գտնում եմ, որ ընկերությունների հայտերը սույն հիմքով ենթակա չեն մերժման:

Այս տեսանկյունից անհրաժեշտ է նաև նշել, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 11.01.2019թ. թիվ 01/6-19 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը սույն խնդրի պարզաբանման նպատակով:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 16.01.2019թ. թիվ 1/26-1381-19 գրությամբ հայտնել է, որ էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով մասնակիցը հայտ ներկայացնում է իր անվանումով բացված կայք-էջով, որտեղ նշված է ՀՎՎՀ-ն և եթե մասնակցի կողմից հայտով ներկայացված հավելվածում նշված ՀՎՀՀ-ն համապատասխանում է կայք-էջում նշված ՀՎՀՀ-ին, ուստի լիազոր մարմինը գտնում է, որ տվյալ դեպքում հայտն ենթակա չէ մերժման:

Լիազոր մարմինը նույն գրութամբ հայտնել է նաև, որ նկատի ունենալով, որ եթե մասնակցի կողմից էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով գնային առաջարկ է ներկայացվել գնային առաջարկի հավելվածում նշված տվյալ չափաբաժնի համար, ուստի լիազոր մարմինը գտնում է, որ տվյալ դեպքում ևս մասնակցի հայտը ենթակա չէ մերժման:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.01.2019թ. նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետի համաձայն, գնահատող հանձնաժողովը որոշել է, հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության 16.01.2019թ. թիվ 1/26-1381-19 գրությունը, «Յունիպրոտեկտ Գարդինգ», «Սեքյուրիթի Գրուպ», «Սայգա» պահնորդային ՍՊ ընկերությունների՝ անբավարար գնահատված հայտերը վերագնահատել և ճանաչել բավարար:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Յունիպրոտեկտ Գարդինգ» ՍՊԸ-ի կողմից 21.01.2019թ. ներկայացված և այնուհետև որպես ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնված բողոքարկման ընթացակարգն ըստ էության համարվում է առարկայազուրկ, քանի որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը վերագնահատել է ընկերության հայտը և այն համարել է բավարար, գտնում եմ, որ բողոքն ենթակա է մերժման:

Անդրադառնալով «Յունիպրոտեկտ Գարդինգ» ՍՊԸ-ի կողմից 31.01.2019թ. ներկայացված դիրքորոշման, անհրաժեշտ է նշել, որ Ընկերությունը 22.01.2019թ. միջնորդությամբ խնդրել է առանց քննության թողնել ԳԲՔԱ-ԱՄ-2019/07 բողոքը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 06.12.2018թ. N 600-Ն

հրամանով հաստատված Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության կարգի 22-րդ կետի համաձայն՝ ԳԲՔԱ-ԱՄ-2019/07 քողոքը համարվել է որպես ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնված բողոքարկման ընթացակարգ:

Այնուամենայնիվ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն գործի բազմակողմանի ուսումնասիրությունն ապահովելու համար, անդրադառնալով «Յունիպրոտեկտ Գարդինգ» ՍՊԸ-ի կողմից 31.01.2019թ. ներկայացված այն դիրքորոշմանը, համաձայն որի Ընկերությունը գտնում է, որ «Սեքյուրիթի Գրուպ» ՍՊԸ-ի հայտը ենթակա է մերժման այն պատճառով, որ «Սեքյուրիթի Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը ստորագրված է եղել ոչ թե տնօրենի, այլ աշխատակցի կողմից, որին լիազորելու վերաբերյալ լիազորագիր կցված չի եղել, ապա հայտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.01.2019թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետի 1-ին ենթակետով արձանագրվել է վերոհիշյալ փաստը և «Սեքյուրիթի Գրուպ» ՍՊԸ-ն սահմանված կարգով ծանուցվել է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ «Սեքյուրիթի Գրուպ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է համապատասխան լիազորագիրը:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ «ԳՐԻՖ» ԱՀԻԳ ՍՊԸ-ի կողմից 22.01.2019թ. ներկայացված համանման բողոքն անհիմն է և նույնպես ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. «Յունիպրոտեկտ Գարդինգ» ՍՊԸ-ի կողմից 21.01.2019թ. ներկայացված բողոքի հիման վրա ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնված բողոքարկման ընթացակարգը մերժել:

2. «ԳՐԻՖ» ԱՀԻԳ ՍՊԸ-ի կողմից 22.01.2019թ. ներկայացված համանման բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**